# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1570-Ա «18» նոյեմբերի 2026թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՍԱԿՈՎԻ ԱՆՎԱՆ Հ.132 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» օրենքի 11-րդ հոդվածի, ՀՀ ֆինանսների նախարարի 2026 թվականի հոկտեմբերի 8-ի N 270-Ն հրամանով հաստատված Հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկի 184-րդ կետի և Երևանի քաղաքապետարանի ներքին աուդիտի կանոնակարգի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2025 թվականի դեկտեմբերի 19-ի N 5209-Ա որոշման N 2 հավելվածի 18-րդ կետը՝

1. «Երևանի Հովհաննես Իսակովի անվան հ. 132 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում իրականացնել 2023-2026թթ. համակարգի գնահատման աուդիտ՝ 2026 թվականի նոյեմբերի 19-ից մինչև 2026թ. դեկտեմբերի 16-ը ներառյալ:
2. Աուդիտորական խմբի ղեկավար նշանակել աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ՝ Սեյրան Թունյանին:
3. Աուդիտորական խմբի անդամներ նշանակել՝ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ՝ Սվետա Հարությունյանին և գլխավոր մասնագետի ժ/պ՝ Լուսինե Դանիելյանին:
4. «Երևանի Հովհաննես Իսակովի անվան հ. 132 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ սահմանված կարգով ապահովել աուդիտորական խմբի անդամների անարգել մուտքն ընկերության տարածք, աջակցել աշխատանքներին և պահանջվող ժամկետներում տրամադրել աուդիտի իրականացման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, տեղեկատվությունն ու բացատրությունները:
5. Աուդիտորական խմբի ղեկավարին՝ սահմանված կարգով ներկայացնել աուդիտորական հաշվետվություն:

6. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի վրա:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ** 